

կը պատուիրէ որ իր կտակակատարները տան եւ յանձնեն անոր այս երրորդ բաժնէն մնացած մասը: Իսկ եթէ պատահի որ յիշեալ Գուխտոն քսան տարեկան չեղած զրկուի կեանքէն, կտակարարս կը փափագի եւ կը պատուիրէ որ իր կտակակատարներն այս երրորդ մասէն մնացած գումարը տան եւ յանձնեն իբր ողորմութիւն աղքատներու, Աստուծոյ սիրուն, կտակարարիս եւ յիշեալ Գուխտոնի հոգիին համար, նոյն կտակակատարներուն կարգադրութեամբը:

Նոյնպէս, կտակարարս կը փափագի եւ կը պատուիրէ, որ չորրորդ եւ վերջին բաժինը՝ իր կտակակատարներուն կողմէ կամ անկէ եւ կամ անոնցմէ որ պիտի միջամտեն կտակիս գործադրութեանը՝ տրուի եւ բաժնուի իր բոլոր ծառաներուն որոնք կը ծառայեն այժմ եւ պիտի ծառայեն իր վախճանելու ժամանակ, ո՛ւրտեղ որ ըլլան, իրենց ըրած եւ ընելիք վաստակին եւ արժանիքին համեմատ՝ իւրաքանչիւրին մաս մը հանելով: Եւ ասիկա՝ իրենց վիճակին, իրենց աշխատած ժամանակի տեւողութեան եւ իրենց բարւոյ ծառայութեան համեմատ տրուի: Ամէն բան յիշեալ կտակակատարներու կարգադրութեան համաձայն կատարուի: Արդ՝ բոլոր վերոյիշեալները նոյնութեամբ ընելու, հաստատելու, կատարելու, ուզուածին պէս գործադրել տալու եւ վերջացնելու համար՝ ինչպէս վերն ըսուած է՝ յիշեալ կտակարար Լեւոն Թագաւորը վերոյիշեալ նօտարներու առջեւ հաստատեց, անուանեց, որոշեց եւ ընտրեց իր կտակակատարներն եւ ինչքերու վերակացունները (suy commissaires), որ են՝ պարոն Ֆիլիպ Մէզիէրը, ասպետ եւ դիւանապետ Կիպրոսի, յիշեալ կտակարարին Պարիսի մէջ Թաղուելիք եկեղեցիին վանահայրն եւ կամ գործակալն որ կտակարարիս Լուդովիկոս ու Փրանկիսկոս սենեկապետներուն հետ կտակակատար պիտի ըլլայ: Այս բոլոր կտակակատարներուն՝ միասին կամ անոնցմէ երկուքին եւ կամ միայն մէկին — երբ միւսները հրաժարին խառնուիլ — յիշեալ կտակարարը տուաւ եւ կուտայ ներկայիս լիազօրութիւն, իշխանութիւն եւ մասնաւոր յանձնարարութիւն՝ իրեն այս կտակը հաստատելու, կատարելու եւ գործադրել տալու համար ուզուածին պէս եւ կտակագրին եղանակին ու բովանդակութեան համաձայն, եւ իր բոլոր կտակակատարներուն եւ ինչքերու վերակացուններուն — միասին կամ անոնցմէ երկուքին եւ կամ՝ վերոյիշեալ պարագային՝ միայն մէկին — հիմակուրնէ փոխանցեց եւ Թողուց իր շարժական եւ անշարժ ստացուածքն որ պիտի ունենայ եւ կրնայ ունենալ վախճանած օրը, ո՛ւրտեղ որ գտնուին անոնք, որպէս զի այս կտակագիրը գործադրել տան վերոյիշեալ կերպով: Կտակարարն այս կտակագրին գործադրութեանը միջնորդելու պաշտօնն ունեցող կտակակատարներէն իւրաքանչիւրին Թողուց եւ շնորհեց՝ հարիւրական ֆրանկ ոսկի: Իսկ բոլոր այն շարժական եւ անշարժ ստացուածքներուն համար՝ Թէ՛ մեր ու մեր յաջորդներու